դութեամբն, նոյնպէս և Ձեր ինքնակալութիւնդ վասն սիրոյն Քրիստոսի և Սրբոցդ բարեխօսութեան և աղաչանաց մերոց, զտառապեալ հօտդ այնպէս պահեսցէ. և որպէս մինչև ցայժմ՝ այց առնելով զրկանաց դոցին՝ զեկեղեցին իւրեանց յինքեանս դարձուսցէ։

Եւ մեք հանդերձ ամենայն վանօրէիւք և անապատաւորք և ամենայն վիճակեցելովք մերովք՝ օրհնող եմք և օրհնեմք զինքնակալ Տէրութիւնդ Ձեր, հանապազ աղօթս մատուցանեմք վասն Քրիստոսապարգև թագաւորութեանդ, զի խաղաղութեամբ վարեսջիք զկեանս զայս՝ ըստ Տեառն հաճոյից, խրոխտ և ահարկու ի վերայ ամենայն թշնամեաց խաչին։ Իսկ զդաւանութիւն Հայաստանեայցս եկեղեցւոյ՝ ըստ ուղղափառ սրբոց Հարցն, զոր խնդրեաց Պօղոս աստուածաբան վարդապետն, ի միւս թղթին ծանիցէ ինքնակալ տէրութիւնդ Ձեր։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ քեզ և ընդ քոյն ամենայն։

Գրեցաւ ի Կենարարին մերոյ թուականի հազար վեց հարիւր և քառասուն և չորս. Յուլիս ամսոյ քսան և եօթն։

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Խնդիրք իմ այս են ի քէն, ով Աստուածապսակ արքայ, զի զայդ տառապելոց զդատաստանն դու դատես և տաս իրաւունս, և ոչ առ այլս ձգես. զի քո են ժողովուրդ։ Իմով ձեռամբս գրեցի։